

## Հասմիկ USԵՓԱՆՅԱՆ

### ԵՐԱԺԾՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՊԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Հայ միջնադարյան պատմագրության մեջ հայտնաբերում ենք արժեքավոր փաստեր հայ միջնադարյան մասնագիտացված երաժշտությամ՝ որպես գիտության և գիտական դասընթացի տեղի ու նշանակության, մասնագիտացված երգեցողության առնչվող հասկացությունների ու եզրերի, ձայնեղանակների համակարգի, ինչպես նաև երաժշտական խազագրության արվեստի, խազավոր մատյանների և խազագրության նշանավոր կենտրոնների մասին։ Անդրադառնամբ դրանց հաճախանորդներ։

Միջնադարյան մատենագրության մեջ մշտապես կարևորվել է քառյակ գիտությունների շարքում երաժշտության գրաված ուրույն տեղը։ XVդ. Հովհաննես գրիչը ուղղակի հիշատակում է. «զերաժշտական գիտութիւն»։<sup>1</sup> Գրիգոր Մազհատրոսն իր Թղթերում նշտապես հիշեցրել է դեռև Արիստոտելի ժամանակաշրջանում համակարգված քառյակ գիտությունների շարքը, որտեղ մշտապես ընդգրկված է եղել նաև երաժշտությունը՝ թվաբանության, երկրաչափության և աստղաբաշխության կողքին։<sup>2</sup>

Հայ միջնադարյան երաժշտության տեսության կենտրոն հարցերից մեկը V-VIIդ.-ում ճայնագործյան որևէ համակարգի գոյությունն ու կիրառության հնարավորությունն է։ Խնդրի լուսաբանման հիմնական խոչընդուռություն երաժշտական ճեռագիր աղբյուրների բացակայությունն է, որի պատճառով այլ գրավոր աղբյուրներում ընդգրկված տեղեկություններն առանձնահատուկ կարևորություն են ձեռք բերում։ Դրանց մեջ իր բացառիկ տեղն ունի Ղազար Փարպեցու Պատմության այն հատվածը, որտեղ պատմից նկարագրում է, թե ինչպես Վ դարում գրերի գյուտից հետո, թարգմանչական աշխատանքների ժամանակ նեծածավալ աշխատանք է կատարել Սահակ Պարքեր, «որ յոյժ առլցաւ գրազում գիտուվըն Յունաց, եղեալ կատարելապէս հմտու երգողական տառիցն»։<sup>3</sup>

Նշենք, որ Ղազար Փարպեցու Պատմության ճեռագրերից մեկում երգողական տառիցն արտահայտության փոխարեն նշված է՝ *քերքողական տառիցն*։<sup>4</sup> Այս ճեռագիրը բույլ է տվել վերջնահաստատելու երգողական տառերի՝ ճայնավոր տառեր մեկնությունը։<sup>5</sup> Հիմնվելով համատեքստի մանրակրկիտ վերլուծության վրա, ըստ որի Ղազար Փարպեցու վկայության մեջ նկարագրված են Սահակ Պարքերի ծավալած թարգմանչական աշխատանքի մանրամասները և հատկապես «հայերենի վանկերը հունականին համապատասխանեցնելու» խնդրի մատնանշումը, Ն.Թահմիզյանը եզրակացրել է, որ երգողական կամ քերքողական տառերը հունական ճայնավոր տառերն են, այսինքն Սահակ Պարքեր քաջատեղյակ է եղել հունական ճայնավորների քերականական ուսումնքին։<sup>6</sup>

Այսպիսով, բացահայտվում է երգողական տառերի քերականական նշանակությունը։ Միևնույն ժամանակ նշված ուսումնասիրության մեջ երգողական տառերի մեկնաբանության շրջանակներում ներկայացված է հունական ճայնավոր տառերի քերական, և թե՝ գործնական մեկնություններում կրած երաժշտական իմաստը՝ հիմնված յոր հնչյունների խորիրդապաշտական ըմբռնումների վրա, որով էլ պայմանավորված է ընդհանրապես հունական ճայնավորների երաժշտա-քերականական ուսումնքին։<sup>7</sup>

<sup>1</sup> ԺԵ դարի հայերեն ճեռագրերի հիշատակարաններ, Սահմ II (1451-1480), Եր., 1958, էջ 17-18:

<sup>2</sup> Գ. Մա զ ի ս ո ռ ս, Թոքեր, Ակերսանդրապոլ, 1910, էջ 72, 105:

<sup>3</sup> Ղազար Փարպեցու Պատմութիւն Հայոց և թուրք առ Վահան Սամիկոնեան, Տիկիսի, 1904, էջ 15-16։ Այսուհետև բնագրային բոլոր ընդգծումները մերն են։

<sup>4</sup> Ս. Հակոբյանց վանքի մատենադարանի 1419թ. Ծառնատիր:

<sup>5</sup> Բնագիրմ այդպես է թարգմանել Սիմաս քահ. Տեր-Պետրոսյանցը, տեսն Ղազար Փարպեցու Հայոց Պատմութիւնը, Ակերսանդրապոլ, 1895, էջ 28-29:

<sup>6</sup> Ն.Թ ա հ մ ի զ յ ա ն, Դիտողություններ Փարպեցու պատմության մեջ Սահակ Պարքերին վերաբերող մի արտահայտության մասին, «Քանքեր Երևանի համալսարանի», 1970, N 3, էջ 178-179:

**Էռություն:** Այստեղից, բնականաբար ենթադրելի է այն տեսակետը, որ քաջատեղյակ լինելով հիշյալ ուսումնարկի՝ Սահակ Պարքել տիրապետել է երգողական տառերի երաժշտատեսական և գործնական կիրառությանը:

Ղազար Փարպեցու հիշյալ վկայությունը, միևնույն ժամանակ մղում է այնպիսի հարցադրման անհրաժեշտությանը, ինչպիսին հունական ծայնավոր տառերի երաժշտական գործառության համարնույց կիրառումն է հայկական ծայնավորների օգտագործման սկզբունքներում: Այսպիսով, հնարավոր է ենթադրել հայոց գրերի գյուտից հետո հայոց մեջ Այրենական նոտագրության համակարգի գոյության մասին: Նշենք, որ երաժշտագիտության մեջ այս մասին արժեքավոր ենթադրություններ են արվել: Որոշ երաժշտագիտներ պարզապես ընդունել են, որ համաձայն Ղազար Փարպեցու հիշատակության, հայկական առաջին նոտագրության համակարգը եղել է այբուբենը (Վագներ, Ռիզ):<sup>7</sup>

Երգողական տառերը այլ կերպ է մեկնարանել Հակոբ Հռվիաննիսյանը: Ենթադրելով, որ դրանք կարող են առողանության նշաններ լինել, նա հավանական է համարել, որ Ղազար Փարպեցու հիշատակությունը կարող էր վերաբերել «հին հունական նոտագրության (վոկալ և գործիքային) սիստեմին»:<sup>8</sup> Հայտնի է, որ հունական վաղ ծայնագրության երկու համակարգերը, ինչպես նաև ծայնագրության համապատասխան եղանակները հիննականում ենթարկվել են նվազարանային երաժշտության օրինաշափություններին:<sup>9</sup> Ղազար Փարպեցու հիշատակության համատեքստում երգողական տառերը ավելի շուտ ենթադրում են հոգևոր երգեցողության ոլորտ: Այդուհանդեռձ, հիշյալ տեսակետը այսօր էլ կարելի է դիտել իրքու արժեքավոր ենթադրություն և պնդել, որ խազային նոտագրությունից առաջ մի նախնական համակարգ այնուամենայնիվ գոյություն է ունեցել, և անցումը մի համակարգից մյուսը տեղի է ունեցել օրինաշափ ընթացքով: Հիշատակության համատեքստը, տվյալ դեպքում, երբ մեկնարանվում է իր կերպի մեջ եզակի մի արտահայտություն, բավական ծանրակշիռ դեր ունի:

Երգողական տառերի ավելի հեռուն տանող մեկնարանություն է տվել Սպ. Սելիքյան՝ դրանք համարելով հունական առողանության խազեր, որոնք կիրառվել են հայկական թվերգության մեջ և իմք են ծառայել երաժշտական խազերի ստեղծման համար:<sup>10</sup> Այս տեսակետը հերքվում է Ռ. Աքայանի հետազոտության մեջ, որտեղ ձեռագրահամեմատական վերլուծության միջոցով ապացուցվում է, որ հայկական առողանության խազերի համակարգը ձևավորվել է VIII դարում:<sup>11</sup>

Այսպիսով, Ղազար Փարպեցու արժեքավոր հիշատակությունը վերաբերելով հունական ծայնավոր տառերի երաժշտա-քերականական ուսմունքին, միևնույն ժամանակ, ինչպես նշել է Ռ. Աքայանը, թոյլ է տախս ենթադրելու, որ «երգողական տառերը լիմեխն դրանք գրու երաժշտական, թէ առողանական նշաններ, ժամանակին որոշ դեր են խաղացել հայկական երաժշտական կուլտուրայի զարգացման գործում: Բայց այդ վաղագույն նոտագրությունը ... հետազոյս չի պահպանվել և իր տեղը զիջել է խազերի նոր առաջ եկած սիստեմին»:<sup>12</sup>

Եթե Ղազար Փարպեցու հիշատակության մեջ նոտագրության համակարգի գոյությունը լրկ ենթադրելի է, ապա Կիրակոս Գանձակեցու գրչին պատկանող այս առումով բացահիկ արժեքավոր մի հիշատակության մեջ ստույգ խոսվում է XII դարում հայկական խազագրության վիճակի մասին:<sup>13</sup> XII դարում բուրբելջուկյան բռնակալության լուծը բորբակելուց հետո, հայ մշակույթի բարենորոշական շարժումների մի

<sup>7</sup> Տե՛ս Ռ. Աքայան, «Հայկական խազային նոտագրությունը, Երևան, 1959, էջ, 116: Ն. Թամամիզյան, «Հիսուսություններ Փարպեցու պատմության մեջ Սահակ Պարքելի վերաբերող մի արտահայտության մասին»: «Բաներեր Երևանի համալսարանի», 1970, N 3, էջ 137:

<sup>8</sup> Հ. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն, «Հայոց երաժշտության պատմություն, 1939, ձեռագիր, Եր., Գրականության և արվեստի բանագրամ, էջ 64:

<sup>9</sup> Մյզիկալնայա կոլլեցիա գրադարանի պատմության մեջ պատմության մեջ պատմության մասին: «Բաներեր Երևանի համալսարանի», 1937, стр. 169.

<sup>10</sup> Սպ. Սելիքյան և նա, «Հունական ազդեցությունը հայ երաժշտության տեսականի վրա, Թիֆլիս, 1914, էջ 17:

<sup>11</sup> Ռ. Ա բ ա յ ա ն, «Հայկական խազային նոտագրություն, Եր., 1959, էջ 19-38:

<sup>12</sup> Նոյն տեղում, էջ 70-79:

<sup>13</sup> Կ ի ր ա կ ո ս գ ա ն ճ ա կ ե ց ի, «Պատմություն հայոց, Եր., 1961, էջ 211-212:

կարևոր բնագավառը, անշուշտ, հայ մասնագիտացված երգարվեստի վերականգնումն ու հետագա զարգացումն էր: Անհրաժեշտ է նշել, որ իրեն կարևոր միտում նկատելի էր առավել մեծ չափով տուժած հայոց հյուսիս-արևելյան շրջաններում Կիլիլյան Հայաստանի մշակույթի հետ սերտ հաղորդակցությունը: Կիրակոս Գանձակեցու վկայության համաձայն, Հաղարծնի վաճքի առաջնորդ Խաչատոր Տարոնեցին հայոց Արևելքի կողմերն է բերել խազերը և «զանմարմին եղանակսն ի մարմին ածել»:<sup>14</sup>

Ակնհայտ է, որ պատմագրական շատ հիշատակությունների ու վկայությունների մեկնության ճշգրտության գրավականը դրանց սեղմ մտքերի բոլոր մանրամասների ու տարրերի մանրախույզ քննումն ու համադրումն է: Դրանցից ամենափոքրի անտեսումն անզամ բնագրի իմաստի խեղաքուրման տեղիք է տալիս: Ահա իհմք ընդուներով Կիրակոս Գանձակեցու այս հիշատակության մեջ այն միտքը, որ խազերը «...ցայն ժամանակս չեւ սփռեալ ընդ աշխարհս»՝ մի շաքր գիտնականներ (Վազներ, Տիրո, Սպ. Մելիքյան, Մ.Պոտուրյան) եկել են եղանակացության, որ Խաչատոր Տարոնեցին առաջնան է ներմուծել խազագրությունը հայ իրականության մեջ:<sup>15</sup> Սինչղեռ Կիրակոս Գանձակեցին նշել է այն մասին, թե ինչպես է Տարոնեցին «զանմարմին եղանակսն ի մարմին ածել»:<sup>16</sup> Միանգամայն իրավացի է Հակոբ Հովհաննիսյանը, երբ նշում է, որ խսքը ավելի շուտ պատմական ամբարենայաստ պայմանների պատճառով մոռացության տրված համակարգի մասին է:<sup>17</sup> Այսինքն, Խաչատոր Տարոնեցին բարենորդել և վերստին եղանակավորել է ամսարժին եղանակները, ինչի շնորհիվ Ղ. Ալշանը նրան ներկայացրել է իրեն «Եղանակող խազից նորոգողն»:<sup>18</sup> Այսիսով, Խաչատոր Տարոնեցին բարենորդել և վերստին եղանակավորել է ամսարժին եղանակները: Այս տեսակետից, Կիրակոս Գանձակեցու հիշատակությունը մի արժեքավոր փաստ է հայկական խազային նոտագրության զարգացման գործընթացի ուսումնասիրման մեջ:

Ապացուցերով, որ խազերի համակարգը ձևավորվել է VIII դ., Ո. Արայանը ցույց է տվել, որ խազային ձայնագրության համակարգը մինչև Խաչատոր Տարոնեցու ժամանակաշրջանն արդեն զարգացման որոշակի ընթացք ապրել էր: «Ուստի, - նշում է նա, - պեսոք է ընդունեն, որ Տարոնեցին եղավ մանրուսման երգերի ու ժողովածուների Կիլիկիայից Հայաստան բերողը, դրանց իհման վրա այստեղ նոր գրվող (կամ արտագրվող) երգերի խազավորողը և մանրուսման արվեստը տարածողն ու տվորեցնողը»:<sup>19</sup> Այսիսով, Գանձակեցու արժեքավոր հիշատակությունը փաստում է հայկական խազային նոտագրության զարգացման նոր՝ բարձրագույն փուլի նշանավորման մասին:

Այժմ անդրադառնամբ և խազագրության արվեստին առնչվող մեկ այլ հարցի՝ քննելով այն պատմական աղբյուրների շրջանակներում: Խոսքը խազ ձայնանիշ անվանումի և դրա տարրերակների մասին է: Նշենք, որ մեր դիտարկած աղբյուրներում խազ անվանումը առավել սակավ գործածվողն է: Համովարում են եղակի պատկերավոր անվանումներ. մարզարտաշար տառ,<sup>20</sup> շնորհալի տառ,<sup>21</sup> երաժշտական տառ,<sup>22</sup> եղանական տառից<sup>23</sup> և, նոյնիսկ՝ գծագիր:<sup>24</sup>

Առավել գերակշռող անվանումն է եղանակատր տառ-ը, որը հիմնականում հանդիպում է ձեռագրերի հիշատակարաններում՝ բավական կայուն, բանաձևային ձևակերպուներում, ինչպես, օրինակ. «Գրեցալ եղանակատր տառս բուականիս ...»:<sup>25</sup>

<sup>14</sup> Կ. Գ. ա ն ձ ա կ ե ց ի, նոյնը:

<sup>15</sup> Ն. Ծահմի զ յ ա ն, Հաղարծնի վաճքը և Խաչատոր Տարոնեցի երաժիշտ վարդապետը, Գիտական աշխատավորյունների միջորուսական ժողովածու, Արվեստագիտություն, Եր., 1975, էջ 285: Ու. Արայան, նշվ. աշխ., էջ 63:

<sup>16</sup> Նոյնը:

<sup>17</sup> Հ. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն, նշվ. աշխ., էջ 100:

<sup>18</sup> Ղ. Ալիշանի և պարագայ իւր, Վեճնարիկ, 1873, էջ 90:

<sup>19</sup> Ու. Արայան ն, նշվ. աշխ., էջ 65:

<sup>20</sup> ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Սասն I (1401-1450), Եր., 1955, էջ 579:

<sup>21</sup> Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, Եր., 1984, էջ 108:

<sup>22</sup> Նոյն տեղում, էջ 420:

<sup>23</sup> Նոյն տեղում, էջ 468:

<sup>24</sup> ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Սասն II (1451-1480), Եր., 1958, էջ 238:

<sup>25</sup> ԺԳ դարի հիշատակարաններ, Եր., 1950, էջ 36-37:

Խազագրության արվեստի հարցերին նվիրված իր հետազոտության մեջ Ն.Թահմիզյանն անդրադառնարկ այս բանաձևին նշել է, որ այն վերաբերել է Մանրուստմն մասնակին, որի մեջ ամփոփվել է խազգրքերում պարունակվող երգերի ամբողջությունը.<sup>26</sup>

Սակայն, ձեռագրերի հիշատակարաններում հանդիպող վերոհիշյալ բանաձևի համեմատական քննության մեջ նկատեցինք, որ այդ բանաձևը նույնությամբ հիշատակվում է նաև խազավոր այլ մատյաններում: Անդրադառնանք դրանց:

Սանրուստմն խազգրքերի հիշատակարաններում մեծ մասամբ հանդիպում է «Գրեցաւ եղանակատր տառ» որ կոչվ Մանրուստմներուց՝ բանաձևը<sup>27</sup> և հազվադեպ բացակայում է որ կոչվ ձևակերպում՝ ուղղակի նշելով եղանակավոր տառերի մասին.<sup>28</sup>

Նույն բանաձևը, երբեմն անեղան խմբագրմամբ, հանդիպում է Շարակնոցների հիշատակարաններում. «Գրեցաւ եղանակատր տառ» բուլականիս»<sup>29</sup> կամ. «Գրեցաւ եղանակատր տառ» շարականաց»<sup>30</sup> նաև. «... որ կոչվ Շարակնոց»:<sup>31</sup> Վերոնշյալ բանաձևը անփոփոխ հիշատակվում է նաև «Գանձարանների հիշատակարաններում. «Արդ, գրեցաւ եղանակատր տառ» որ կոչվ Գանձատեստը»:<sup>32</sup>

Զարգացած ավատափիրության ժամանակաշրջանին վերաբերող խազավոր ձեռագրերը խազագրության արվեստի բարձրագույն փուլում համապատասխան համակարգերի ձևակրման և ըստ մատյանների՝ եղանակավոր տառերի համապատասխան զրարկման համակարգերի (Շարակնոցի և Մանրուստմն խազեր) զարգացման խոստություններ են: Անդրադառնանք նաև խազավոր մատյանների քննություններին առնչվող որոշ հարցերի:

Ծիսամատյանների քննության մեջ հարցերում իրքը արժեքավոր տվյալներ պետք է դիտել դրանց խմբագիրների անունների նշումը և ըստ այդմ հիշատակագրի կողմից մատյանի արժեքավորումը: Դրանք ճշգրիտ վկայություններ են, որոնք խոսում են ծիսամատյանի պատմական զարգացման, խազագրության արվեստի ծաղկման և ծիսամատյանի առավել կայուն ոճական զծերի մասին: Այդ վկայությունները հնարավորություն են տալիս առանձնակի արժեքավորելու այս կամ այն խմբագրին վերագրվող մատյանի առանձնահատկությունները, քանի որ ծիսամատյանների նոր խմբագրությունները հետևանք են նի կողմից խազային արվեստի ծաղկման շնորհիվ նորանոր եղանակների ընդունման, մյուս կողմից էլ այդ եղանակների և դրանց խմբագրման բարդություններով պայմանավորված զուտ գործնական-կիրառական քննությունների հաղթահարման: Այսպես Շարակնոցների հիշատակարաններում առանձնահատուկ տեղ են գրավում Գրիգոր Խաչեցու խմբագրած մատյանների հատուկ կարևորումը: Գրեք յուրաքանչյուր ձեռագրում խմբագրի անունը յուրահատուկ հիշատակում ունի. «յընտիր արինակէ գրիգորի դպրի, որ մականուն կոչի կոչիր»,<sup>33</sup> «ի գիր, ըստ իմում կարի կոչեցի արինակա՝ բանի և եղանակա սոութեալ»,<sup>34</sup> «ի լաւ և ընտիր արինակա կոչո»<sup>35</sup> և այլն:

Անդրադառնանք Շարակնոցին առնչվող մեկ մասնավոր հարցի ևս: Խոսքը Զայնքաղ կոչվող Շարակնոցի մասին է, որտեղ գետեղված էն գիշերային ժամերգության լընթացքում երգվող օրինության տաս պատկեր շարականները:<sup>36</sup> Ըստ Ս.Օրնանակին՝ այս Շարակնոցն ստեղծվել է XVII դարում Սովորել Գ. Տարեացի կարողիկոսի

<sup>26</sup> Ն. Թահմիզի աշխատավոր և հայոց հոգևոր երգարվեստի ուսումնասիրության հարցերը, Կոմիտասական, հ.1, Եր., 1969, էջ 195:

<sup>27</sup> Ժ-Դ դարի հիշատակարաններ, Եր., 1950, էջ 126, 228, 314 և այլն:

<sup>28</sup> Նոյն տեղում, էջ 197-198; Ժ-Դ դարի հայերն ձեռագրերի հիշատակարաններ, Մասմ I (1401-1450), Եր., 1955, էջ 316, և այլն:

<sup>29</sup> Ժ-Դ դարի հիշատակարաններ, Եր., 1950, էջ 74:

<sup>30</sup> Նոյն տեղում, էջ 126:

<sup>31</sup> Ժ-Դ դարի հայերն ձեռագրերի հիշատակարաններ, Մասմ II (1451-1480), Եր., 1958, էջ 433:

<sup>32</sup> Նոյն տեղում, էջ 251:

<sup>33</sup> Ժ-Դ դարի հիշատակարաններ, Եր., 1950, էջ 290:

<sup>34</sup> Ժ-Դ դարի հայերն ձեռագրերի հիշատակարաններ, Մասմ II (1451-1480), Եր., 1958, էջ 15-16:

<sup>35</sup> Ժ-Դ դարի հայերն ձեռագրերի հիշատակարաններ, Մասմ II (1481-1500), Եր., 1967, էջ 233:

<sup>36</sup> Այս մասին առավել մանրամասն տես՝ Հ. Ստեփանյան, Կանոնի ընդլայնման սկզբունքները հայոց ուշմիջնադարյան պաշտոներգության մեջ, ԳԱԱ ԸՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 5, Գյումրի, 2002, էջ 173:

օրոք<sup>37</sup>: Մինչդեռ մեր դիտարկումները պարզեցին, որ արդեն XV դարում գրված ձեռագրերի հիշատակարաններում հանդիպում է Զայնքաղ անվանումը.<sup>38</sup> Կարծում ենք՝ հիշատակարանների հաղորդած տվյալները կարող են Զայնքաղ Շարակնոցներին վերաբերող հասուկ ուսումնափրության նյութ հանդիսանալ:

Վերադարձնալով Շարակնոցի խմբագրության հարցերին՝ նկատենք, որ այս գործընթացը մեծապես կապված էր նաև Մանրուսան խագերի որոշակի ազդեցության և արդեն XII դարում զարգացման բարձրագույն փուլ թևակոխսած տաղերի և գաճաճերի որոշակի մերգործության հետ: Պահպանվել է Գրիգոր Խոլարեցու գրչին պատկանող Գանձարանի 1408թ. հիշատակարանը,<sup>39</sup> որտեղ նա հանգամանութեն հիմնավորում է իր խմբագրական աշխատանքի նպատակը և, որ անշափ կարևոր է, ընդգծում է իր հավաքած գաճաճերի ոճական հարաստության, կանոնակարգված եղանակների բազմազանության մասին: Նշենք, որ Գրիգոր Խոլարեցու խմբագրած Գանձարանը հետագայում նույնապես չափանուշի դեր է կատարել և ընդօրինակվել է որպես ընտիր ժողովածություն: «... ի լաւ և յընդիր արինակէ Ծերենց մատամք գրէ»:<sup>40</sup>

Նշենք նաև Մանրուսան խմբագիրների մասին, որոնց անունները միջնադարյան գրիչներն ընդգծել են. *Առաքեցի*,<sup>41</sup> *Կարապետցի*,<sup>42</sup> *Կոստանդէ*:<sup>43</sup> Անտարակույս, հիշատակված են խազագրության հմուտ գիտակների անուններ, որոնց խմբագրած խազգրերը ճանաչվել են որպես չափանուշ: <sup>44</sup>

XIII-XVդդ. ձեռագրերի հիշատակարաններում հանդիպող դիտարկումները ցույց են տալիս, որ գրիչները որոշակի բարդությունների և խոշննութերի են հանդիպել խազագրության արվեստին տիրապետելու գործում և նույնիսկ ընդօրինակվող լավագույն օրինակը ձեռք բերելուց հետո էլ հմուտ խազագետի խորհրդատվության անհրաժեշտությունն են զգացել:

Հայ միջնադարյան մասնագիտացված երաժշտության տեսության հիմնախնդիրներից մեկը ճայնեղանակների համակարգի զարգացման փուլերի ու կարևոր հանգրվանների ժամանակաշրջանների ճշգրտումն է:

Աղբյուրագիտական նյութերի ընտրանիի մեջ կարևորագույն տեղ է գրադենում Ստեփանոս Օքբեյանի հաղորդումն այն մասին, որ VIII դարի նշանավոր գիտնական, երաժշտ-տեսաբան և երգահան Ստեփանոս Սյունեցի եպիսկոպոսը «քաժանեաց և զուր ձայնն»:<sup>45</sup> Նկատի ունենալով այն իրողությունը, որ մինչ այժմ հայունի աղբյուրներում դա հայ մասնագիտացված երաժշտության մեջ Ուրծայնի կիրառման առաջին հիշատակությունն է, ինքնին պարզ կդառնա վերջինին նկատմամբ երաժշտագիտական մտքի ցուցաբերած մեծ հետաքրքրությունը: Օրինաչափորեն դրվել է այն հարցը, թե արդյո՞ք Ստեփանոս Սյունեցին է հայ մասնագիտացված երաժշտության մեջ առաջինը համակարգելու արդյունակությունը:

Սատենագրական մի շարք աղբյուրների տվյալների համաձայն, Ուրծայնի կարգավորումը վերաբերում է V դարին, իբրև Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթիկ գործունեաւթյան արգասիք: Այս մասին բազմից նշվում է հատկապես զարգացած ավատադիրության ժամանակաշրջանին վերաբերող ձեռագիր հիշատակարաններում և ընկալվում է որպես բոլորին հայունի փաստ: Խոսքն այսուեղ, անշուշտ, Շարակնոցի ձևավորման և ըստ ճայնեղանակների կանոնակարգման մասին է, որը բնութագրվում է

<sup>37</sup> Ս. Օ ր մ ա ն յ ա ն, Ծիսական բառարան, Եր., 1992, էջ 97:

<sup>38</sup> ԺԵ դարի հայերնեն ձեռագրերի հիշատակարաններ, Սասմ II (1451-1480), Եր., 1958, էջ 26-27:

<sup>39</sup> ԺԵ դարի հայերնեն ձեռագրերի հիշատակարաններ, Սասմ I (1401-1450), Եր., 1955, էջ 90-91:

<sup>40</sup> ԺԵ դարի հայերնեն ձեռագրերի հիշատակարաններ, Սասմ II (1481-1500), Եր., 1967, էջ 514:

<sup>41</sup> ԺԵ դարի հայերնեն ձեռագրերի հիշատակարաններ, Սասմ I (1401-1450), Եր., 1955, էջ 390:

<sup>42</sup> Նոյն տեղում, էջ 130:

<sup>43</sup> ԺԵ դարի հիշատակարաններ, Եր., 1950, էջ 88:

<sup>44</sup> Խմբագիրների այս շարքը լրացրել է Ն. Թահմիջյանը՝ անտիպ ձեռագիր հիշատակարաններից մեկում հանդիպող Վաւծընցի անունը: Տե՛ս Ն. Թահմիջյան, Արդի խազարանութիւն, Փաստենա, 2003, էջ 49:

<sup>45</sup> Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփանոսի Օքբեյան արքեպիսկոպոսի Սիմեոնց, Թիֆլիս, 1910, էջ 139:

երեսն նաև՝ «քաջոլորակ բաժանմամբ ճայնից»:<sup>46</sup> Քաջոլորակ բնորոշումը, ինչպես հայտնի է, վերաբերել է տեքստի եղանակավորման կամ կատարման սկզբունքին: Երգվող տաղերին (աշխարհիկ և հոգևոր) վերաբերող այս բնորոշիչի հատկորոշումը Ուրծային համակարգին, կարծում ենք, դարձյալ լավագույն ապացույցն է այն երևոյթի, որն աշխարհիկ երաժշտական մշակույթի կենտրոնակ ավանդությունների և միջնադարյան նոր արժեքների փոխներգրգորթության արդյունքն է: Զայնեղանակը որպես որոշակի ճայնակարգում կամ ճայնակարգերում ծավալվող թեմատիկ նորդել, եղանակավորման ուրույն սկզբունքներով էր առաջնորդվում: Վերոհիշյալ հիշատակությունը հնարավորություն է տալիս վերծանության արվեստի կատարողական առանձնահատկությունները փնտրել նաև ճայնեղանակային համակարգի բնորոշիչների մեջ:

Անդրադասնանք երևոյթի քննության հարցերին: Մասնավորապես հին Հայաստանի երաժշտության տեսությանը նվիրված ուսումնասիրության մեջ Ն. Թահմիզյանը հնագույն ծեռագիր Ժամագիր-Սաղմոսարանների համեմատական վերլուծության արդյունքում եկել է այն եղանակության, որ V դ. ստեղծված այդ ծիսամատյանում առաջին անգամ համակարգվել են որ ճայնեղանակները:<sup>47</sup> Հեղինակի կարծիքով, Ուրծային բարեկարգումով կարող էր օրադրել նաև Բարսեղ Շնոր՝ ենելով հոգևոր երգերի զարգացման, ինչպես նաև դրանց խմբավորման առանձնահատկություններից: Այստեղից հետևում է, որ Սյունեցին VIII դ. տեսական նոր մոտեցում է դրստրել արդեն գոյություն ունեցող համակարգում:

Ընդունված է Ստեփանոս Սյունեցու բարենորոշական գործութեառությունը դիտել որպես այդ ժամանակաշրջանի համարդիստոնեական մշակութային զայի տեղաշարժերի համապատասխան դրսորումը հայկական մշակույթում: Իբրև կարևոր փաստ նշվում է Ստեփանոս Օքբեյանի այն տեղեկությունը, որ Սյունեցին որպես զիտնական կատարելագործվել է Կոստանդնուպոլսում, Արենքում և Հռոմում:<sup>48</sup> Այս հիշատակությունը բույլ է տվել Ռ. Արայանին անելու այն ներառությունը, որ «Սյունեցին, իրազործելով հայկական հոգևոր երաժշտության տեսական հիմունքների մշակումը, հենց ինքն էլ հայկական երաժշտության մեջ մտցրել է խազային նոտագրության մեզ ծանոթ նախնական սխստենը, որն IX դ. արդեն տարածվել էր տարբեր վայրերում»:<sup>49</sup>

Ընդհանրացնելով կարող ենք նշել, որ թեև հայ միջնադարյան երաժշտության տեսությունը ժամանակի զիտական հայեցակարգի կարևորագույն բաղադրիչն է, սակայն որոշ տվյալներ հետաքրքրել են նաև հայ պատմիչներին, որոնք պատեհ առիթներով անդրադարձել են դրանց երևան բերելով զիտական մեծ հետաքրքրություն ներկայացնող փաստեր: Դրանք այսօր էլ համալրվում են նորահայտ նյութերով և ունեն զիտական կարևոր արժեք:

## СВИДЕТЕЛЬСТВА ОТНОСЯЩИЕСЯ К ЗАДАЧАМ ТЕОРИИ МУЗЫКИ В АРМЯНСКОЙ СРЕДНЕВЕКОВОЙ ИСТОРИОГРАФИИ

*Резюме*

*A. Stepanyan*

Среди прочих интересных историко-культурных фактов, в армянских исторических хрониках V-XVвв. нашли место и некоторые, относящиеся в основном к практической теории музыки. Это свидетельства о названиях жанров профессиональной музыки, о формировании Восьмилетия, о важных центрах Манусума и хазового письма, о некоторых интересных специфических исполнительских выразительных признаках армянской духовной монодии. Многие из этих свидетельств играли важную роль в армянской музыкальной медиавистике. Некоторые представлены здесь впервые и носят важную познавательную ценность.

<sup>46</sup> ԺԵ դարի հայերն ճեռագրերի հիշատակարաններ, Սասի II (1451-1480), Եր., 1958, էջ 15-16:

<sup>47</sup> Հ. Տագմազյան, *Теория музыки в древней Армении*, Еր., 1977, стр. 163-164.

<sup>48</sup> Ս. Օքբեյան, ճշգ. աշխ., էջ 139:

<sup>49</sup> Ռ. Արայան, ճշգ. աշխ., էջ 76-77: